ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության և << ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 03.11.2021թ. հ.3 նիստի:

Նիստին մասնակցում են դպրոցի կառավարման խորհրդի 14 անդամներից 14-ը:

Օրակարգում՝

1. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին:

(հաղորդող՝ Ա. Վարդանյան)

2. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հայտը ընդունելու համար լիազորված խորհրդի անդամների ընտրություն:

(հաղորդող՝ Ա.Վարդանյան)

Լսեցին՝

1.Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահ Ա.Վարդանյանին, ով հաղորդեց, որ համաձայն ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 09.02.2017թ. № 56-Ա որոշման՝ 09.02.2022թ. լրանում է Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոցի գործադիր տնօրեն Արայիկ Մարգարյանի լիազորությունների ժամկետը: Ներկայացրեց նաև <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը>>, որի համաձայն անհրաժեշտ է հայտարարել և անցկացնել մրցույթ և առաջարկեց սկսել տնօրենի թափուր տեղի մրցույթի գործընթացը՝ ըստ հաստատված կարգի:

2. Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ Ա. Վարդանյանը նշեց, որ անհրաժեշտ է խորհրդի կողմից լիազորել անդամների, որոնք կկազմակերպեն հավակնորդների հայտերի ընդունման գործընթացը: Ղեկավարվելով << Հանրակրթության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված / փոփոխված՝ 27.08.2021 N 1380 –Ն/ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգի պահանջները և հաստատության կանոնադրության 33-րդ կետի 1-ին ենթակետը՝ միացյալ կառավարման խորհուրդը

Որոշում է

1. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել մրցույթ:
2. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին հայտարարությունը առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել կրթության պետական կառավարման լիազորված մարմնին:
3. Մրցույթի մասին հայտարարությունը սահմանված կարգով հրապարակել www.azdarar.am կայքում:
4. Մրցույթն անցկացնել Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոցում 10.01.2022թ. ժամը՝ 12:00-ին:
5. Հավակնորդների փաստաթղթերի ընդունումը կազմակերպել 2021թ-ի դեկտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ՝ ըստ սահմանված պահանջների:
6. Լիազորել Ս.Պետրոսյանին և Մ.Աղաջանյանին տնօրենի թափուր տեղի հավակնորդների հայտերի ընդունման գործընթացը կազմակերպելու համար:

Դպրոցի կառավարման խորհրդի նախագահ՝ Ա.Վարդանյան

քարտուղար՝ Ի.Սարկիսյան

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ
(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ « ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են « ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ –ում

2021 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը10:00 -ից մինչև ժամը17:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 10-ին՝ ժամը 12:00-ին,

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում

Գեղարքունիքի մարզ,գ.Արտանիշ,փ.1, շ.1

(ուսումնական հաստատության անվանումը և գտնվելու վայրը)

Տեղեկությունների համար դիմել՝ (94)36-41-01 , artanish.dproc@mail.ru

(խորհրդի կողմից լիազորված անդամի հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)»: